ՈՐՈՇՈՒՄ

Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 30.07.2020թ. կայացված թիվ 000000033156 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<29>> 09 2020թ. 7-13- 12170 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Մնացական Մելքոնյանի ՄԴ/125185-20 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Մանթաշյան փողոցի 28Ա շենքի 38-րդ բնակարանի բնակիչ Մնացական Մելքոնյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 30.07.2020թ. կայացված թիվ 000000033156 որոշումը՝ նշելով, որ դիմակն իջեցրել է մի պահ՝ խրոնիկ բրոնխիտի և քթի միջնապատի թեքությամբ պայմանավորված վատ շնչառության պատճառով: Միաժամանակ հեռախոսակապի միջոցով պնդել է դիմում նշված հանգամանքները և խնդրել է տալ գրավոր պատասխան:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 30.07.2020թ. կայացված թիվ 000000033156 որոշումը ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.3-րդ հոդվածի 1.1 մասի համաձայն՝ արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրության ընթացքում ազատ տեղաշարժվելու պայմանները, պահանջները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող ժամանակավոր սահմանափակումների վերաբերյալ պարետի 03.05.2020թ. N63 որոշման հավելված N 14-ի <<Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ>> բաժնի 4-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ վարորդները պարտադիր կրում են դիմակ, որոնք փոխվում են 3 ժամը մեկ պարբերականությամբ:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 30.07.2020թ. ժամը 0930-ի սահմաններում Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի հատվածում քաղաքացի Մնացական Մելքոնյանի վարած <<OPEL>> մակնիշի 35PS751 հաշվառման համարանիշի ավտոմոբիլը կանգնեցվել է Ճանապարհային ոստիկանության ՃՊԾ 1-ին սպայական գումարտակի 4-րդ սպայական դասակի տեսուչներ, ոստիկանության ավագ լեյտենանտ Հ.Մարտիրոսյանի և ոստիկանության կապիտան Հ.Գյորգյանի կողմից՝ Հայաստանի Հանրապետության պարետի 03.05.2020թ. N63 որոշման հավելված N 14-ի <<Մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ>> բաժնի 4-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջի խախտման համար, այն է՝ մարդատար-տաքսի ավտոմոբիլի վարորդը չի կրել դիմակ: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.3-րդ հոդվածի 1.1 մասով կայացվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 000000033156 որոշումը:

Ճանապարհային ոստիկանության ծառայողների կողմից տրված պարզաբանման համաձայն՝ քաղաքացի Մնացական Մելքոնյանի կողմից կատարված իրավախախտումը հիմնավորող՝ տեխնիկական միջոցների կիրառմամբ ձեռք բերված ապացույցներ առկա չեն, սակայն իրավախախտումն եղել է անմիջապես իրենց տեսադաշտում, ակնհայտ և պարզ տեսանելի, ինչի կապակցությամբ կազմվել է համապատասխան արձանագրություն և կայացվել թիվ 000000033156 որոշումը: Միաժամանակ ոստիկանության ծառայողները հայտնել են, որ իրենց և վարորդի միջև ծառայողական բնույթի խոսակցություններից բացի այլ խոսակցություններ չեն եղել:

Այսպիսով, դիմումատուի արարքում առկա են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.3-րդ հոդվածի 1.1 մասի հատկանիշները, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ճանապարհային ոստիկանության վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 30.07.2020թ. կայացված թիվ 000000033156 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Մնացական Մելքոնյանին և Ճանապարհային ոստիկանության ՃՊԾ 1-ին սպայական գումարտակին:

Ե.Կարապետյան

Կատարող՝ Կ.Սուքիասյան
Հեռ. 011-54-47-83